

Եթէ մեր պատմութեան մէջ Սպեր
 Բագրատունեաց գաւառ կը համարուի,
 Տայք ալ յաճախ կապուած են Մամիկո-
 նեանց տան հետ: Եոյն իսկ վերը յիշուած
 Հմայեակ Մամիկոնենի դէպքը՝ ճիշդ այս
 տեղ Ճորոխի վրայ պատահած, արդէն վկայ
 է: Կը բաւէ դարձեալ յիշել մեր պատ-
 մութեան ուրիշ միջագէտ մը: Երբ Հայր
 մարգարտի սագրելով Ռշտունեաց եւ Ար-
 ծրունեաց տոհմերն անձեռ կ'ըլլային, Ար-
 տաւազդ եւ Վասակ Մամիկոնեանք այն
 տոհմերուն ստնդեայ մանուկները «մէն մի
 յանթի հարեալք՝ ի դուրս գնացին» եւ «չո-
 գան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց.
 եւ անդ նստան» եւն (Բուզ. Գ, Ժբ. Գ,
 բ): Ուրիշ բերդ մ'ալ քիչ մ'ետքը կը
 յիշենք: Յետոյ Մամիկոնեանք անհետ կ'ըլ-
 լան աշխարհէս, եւ հոս ալ կը տիրեն Բագ-
 րատունիք: Այսօր հին հայկական այս գաւ-
 առը գոնէ խառն բնակչութիւն ունի: Ծախ
 Հունուտի եւ Համշէնի անմիջական ղրացին՝
 Բաջքարի հարաւային ստորտը տարածուող
 ընդարձակ ձորաշխարհը՝ Խոպրջու-ր ան-
 խառն հայ կթղ. գիւղախումբ մըն է, «եօթն»
 իրականին շատ աւելի բազմաթիւ գիւղե-
 րով: Այստեղ եւ ոչ անձ մը կայ մահմե-